ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 20.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/39

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Օմնիա» ՍՊԸ-ի կողմից 13.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/39 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Օմնիա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Օմնիա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 13.03.2018թ. բողոքով հայտնել է, որ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար 12.02.2018թ. կազմակերպված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/23» ծածկագրով բաց մրցույթի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Օմնիա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, հետևյալ հիմնավորմամբ. «...գնային առաջարկում սահմանված կարգով (տառերով և թվերով) լրացված չէ ԱԱՀ-ի սյունակը...»: Մինչդեռ «Օմնիա» ՍՊԸ-ն չի հանդիսանում ԱԱՀ վճարող, հետևաբար գնային առաջարկ հավելվածը ևս ներկայացվել էր առանց ԱԱՀ:

«Օմնիա» ՍՊԸ-ն համաձայն չէ գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ սահմանված որոշման հետ և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով բողոքարկում է «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/23» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշումը:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Օմնիա» ՍՊԸ-ի հայտը մերժելու հիմք չէր կարող հանդիսանալ գնային առաջարկում սահմանված կարգով (տառերով և թվերով) ԱԱՀ-ի սյունակի լրացված չլինելը, քանի որ «Օմնիա» ՍՊԸ-ն չի հանդիսանում ԱԱՀ վճարող, ուստի Ընկերությունը գտնում է, որ այդ մերժումը հակասում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պայմանները:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է փոփոխել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/23» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշումը:

«Օմնիա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 15.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցություն, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Խորհրդին ուղղված 14.03.2018թ. թիվ 08-93 գրությամբ հայտնել է հետևյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների

գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի՝

5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

8.3 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հայաստանի Հանրապետությունում գործող հարկային օրենսդրության համաձայն, եթե համապատասխան գործունեություն իրականացնող իրավաբանական անձի տարեկան շրջանառությունը չի գերազանցում սահմանված շեմը, ապա նա կարող է հանդիսանալ ավելացված արժեքի հարկ չվճարող, սակայն դա պարտադիր պայման չէ, այլ կազմակերպություններին հարկային դաշտում տրամադրված ընտրության իրավունք: Այսինքն, ԱԱՀ-ով չհարկվող կազմակերպությունը կարող է ցանկացած պահի որոշում ընդունել ավելացված արժեքի հարկով հարկվելու պատրաստակամության մասին:

Նման իմաստ է արտահայտում նաև Օրենքի 34-րդ հոդվածը, որի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ,...:

Գնումների գործընթացի շրջանակներում մասնակիցը պարտավոր է գնային առաջարկով հստակ արտահայտել տվյալ գործարքի գծով ԱԱՀ վճարելու կամ չվճարելու մտադրության մասին, ինչի համար և նախատեսված է այդ սյունակը: ԱԱՀ-ի սյունակով նախատեսված տեղեկատվությունը բովանդակային առումով պարտադիր տրամադրվող տեղեկություն է հանդիսանում մասնակիցների համար: Ի վերջո, 0 (զրո) -ն նույնպես թիվ է և մասնակիցը կարող է այն լրացնել, կամ առնվազն հավելվածի որևէ հատվածում նշել ԱԱՀ չվճարելու որոշման մասին, քանի որ մասնակիցները կարող են տեղեկությունները տրամադրել հրավերով սահմանված օրինակելի ձևերից տարբերվող այլ ձևերով՝ չհակասելով օրենսդրության պահանջներին:

Սույն ընթացակարգի շրջանակում մասնակիցը ԱԱՀ-ի սյունակը թողել է դատարկ առանց լրացնելու կամ որևէ այլ նշումներ կատարելու, ինչը հանգեցնում է թերի լրացված գնային առաջարկի և Պատվիրատուն նշված փաստաթղթի համաձայն չի կարող միանշանակ գնահատել այն, որ մասնակիցը չի պատրաստվում վճարել ԱԱՀ: Թերի լրացված գնային առաջարկի պայմաններում գնահատող հանձնաժողովը Օրենքի համաձայն պարտավոր է մերժել մասնակցի հայտը:

Ելնելով վերը նշվածներից՝ Պատվիրատուն գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելը իրավաչափ է և մասնակցի բողոքը հիմնավոր չէ:

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 15.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների և նյութերի ձեռքբերման

նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/23» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Օմնիա» ՍՊԸ-ն:

2. «Օմնիա» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ հետևյալ ձևով.

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
4	Ինդեֆլյատոր-մեդֆլյատոր Everest	14 678 000 /տասնչորս միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար/		14 678 000 /տասնչորս միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար/
29	Հավաքածու էվերեստ	1 587 000 /մեկ միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար/		1 587 000 /մեկ միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար/

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.02.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Օմնիա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության գնային առաջարկում սահմանված կարգով (տառերով և թվերով) լրացված չէ ԱԱՀ-ի սյունակը:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Օմնիա» ՍՊԸ-ի 13.03.2018թ. բողոքը, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 14.03.2018թ. թիվ 08-93 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ***ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի***

չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: ***Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:*** Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/23» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հայտի թիվ 5 հավելվածով նախատեսվել է գնային առաջարկի հետևյալ օրինակելի ձևը.

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			

****եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Օմնիա» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ՝ հետևյալ ձևով.

Չափա-բաժիններ ի համարնե րը	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերո վ և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
4	Ինդեֆլյատոր-մեդֆլյատոր Everest	14 678 000 /տասնչորս միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար/		14 678 000 /տասնչորս միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար/
29	Հավաքածու էվերեստ	1 587 000 /մեկ միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար/		1 587 000 /մեկ միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար/

Ընկերությունը գնային առաջարկի «ԱԱՀ» դաշտում որևէ նշում չի կատարել: Ընկերությունը բողոքով հայտնել է, որ չի հանդիսանում ավելացված արժեքի հարկ վճարող:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.02.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ «Օմնիա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության գնային առաջարկում սահմանված կարգով (տառերով և թվերով) լրացված չէ ԱԱՀ-ի սյունակը:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Օմնիա» ՍՊԸ-ի գնային առաջարկը, գտնում է, որ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/23» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է ոչ իրավաչափ, հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Դրա հետ մեկտեղ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/23» ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ 5 հավելվածով՝ գնային առաջարկի օրինակելի ձևով նախատեսվել է, որ ***եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի***

Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ գնային առաջարկում ավելացված արժեքի հարկի տողը ենթակա է լրացման այն դեպքում, երբ մասնակիցը տվյալ գործարքի գծով պետք է վճարի ավելացված արժեքի հարկ:

Տվյալ դեպքում «Օմնիա» ՍՊԸ-ն չի հանդիսանում ավելցված արժեքի հարկ վճարող, հետևաբար Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ հոդվածի, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի, Ընթացակարգի հրավերի համաձայն՝ գնային առաջարկում առանձին տողով նախատեսված ավելացված արժեքի հարկի տողը ենթակա չէ լրացման:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Օմնիա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշման հիմնավորման մեջ նշել է, որ Ընկերության գնային առաջարկում սահմանված կարգով (տառերով և թվերով) լրացված չէ ԱԱՀ-ի սյունակը: Դրա հետ մեկտեղ Խորհրդին ուղղված գրության մեջ Պատվիրատուն նշել է, որ գնումների գործընթացի շրջանակներում մասնակիցը պարտավոր է գնային առաջարկով հստակ արտահայտել տվյալ գործարքի գծով ԱԱՀ վճարելու կամ չվճարելու մտադրության մասին, ինչի համար և նախատեսված է այդ սյունակը և ԱԱՀ-ի սյունակով նախատեսված տեղեկատվությունը բովանդակային առումով պարտադիր տրամադրվող տեղեկություն է հանդիսանում մասնակիցների համար: Այս տեսանկյունից Խորհուրդն անհրաժեշտ է գտնում հայտնել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը հստակ սահմանում են այն պայմանը, որի առկայության դեպքում գնային առաջարկի ԱԱՀ սյունակը լրացվում է: Դրա հետ մեկտեղ որևէ իրավական ակտով, ինչպես նաև Ընթացակարգի հրավերով սահմանված չէ, որ նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ գործարքի գծով մասնակիցը ԱԱՀ վճարող չէ, այնուամենայնիվ գնային առաջարկի ԱԱՀ տողը պետք է լրացվի և կատարվի համապատասխան նշում:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Օմնիա» ՍՊԸ-ի գնային առաջարկի ԱԱՀ տողը ընդհանրապես լրացված չլինելը, Ընկերության ԱԱՀ վճարող չլինելու պայմաններում, չի կարող դիտվել որպես վերջինիս հայտը մերժելու հիմք:

Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն

հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Օմնիա» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ Ընկերության գնային առաջարկը ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Օմնիա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 13.03.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝

փոփոխել «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-18/23» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 27.02.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշումը և «Օմնիա» ՍՊԸ-ի հայտը գնային առաջարկի մասով գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**